



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՊԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵԽՈՎԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՅՄՊՐԻՑԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷջ

Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մա-
նուկեան, Կիրակի Յունիս 24ին, ԳԵՅՄՊՐԻՑԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻ ՄԷջ
Քահանայ ծեռնադրեց Բրշ. Տիգրան Սրկ. Ապտալեանը՝ զայն վերակոչելով Տ. Թա-
ղէոս Քահանայ:

Քահանայական կոչումի արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ Յունիս 28ին:
Կիրակի օր Ս. Պատարագը մատոյց Առաջնորդ Սրբազն Հայրը եւ կատարեց Քահա-
նայ կան ծեռնադրութիւնը՝ խարտաւիլակութեամբ Ս. Երրորդութիւն ԵԿԵՂԵՑԻ
Հոգեւոր Հովիւ Արժշ. Տ. Մամբրէ Ա. Քհնյ. Գուգուեանի:

ԶԵԽՈՎԱՐՈՒԹԵՆՔՆ Ետք նորին Սրբազնութիւնը տուալ իր խարտականը՝ յայտնելով
ուրախութիւնը Հայց. ԵԿԵՂԵՑԻ, եւ յորդորելով որ նորընծայ Քահանան հաւա-
տարիմ մնայ Թաղէոսի Առաքեալի օրերէն ի վեր հաստատուած Հայց. ԵԿԵՂԵՑԻ
աւանդութեանց, պատմական հոգիին, եւ ըւլայ նուիրեալ սպասաւորը ԵԿԵՂԵՑԻ եւ
Տիրոջ, զոր պիտի ներկայացնէ միշտ եւ ամենուր իբրեւ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ եւ հոգե-
ւոր ղեկավար:

Տ. Թաղէոս Քհնյ. Ապտալեան ծնած է Հոկտեմբեր 26, 1947ին: ծնողներն են
Մանուկ եւ Վիրջինիա Ապտալեան: Փոքր տարիքէն ան յաճախած է ԵԿԵՂԵՑԻ եւ ան-
դամակցած է Ուոթըրթառունի Ս. Յակոբ ԵԿԵՂԵՑԻ ղպլաց ղասին: Կրթութիւնը
ստացած է Ուոթըրթառունի Հայ Սքուլին մէջ, եւ տարի մը համալսարան յաճախելէ
Ետք զինուորազրուած է: Շրջանը աւարտելէ Ետք յաճախած է Պէնթլի Գոլէճը:

1972 թուականին ան նշանակուած է Ուոթըրթառունի Ս. Յակոբ ԵԿԵՂԵՑԻ վար-
չական տնօրէն: 1977ին, որպէս Ս. Ներսէս Վարժարանի ուսանող, յաճախած է
Մէյնթ Վլատիմիր ղպլականը: Առաջնորդ Սրբազն Հօր Կարգադրութեամբ՝ մէկ
տարի զացած է Ս. Էջմիածին՝ հետեւելու համար հայագիտական եւ ԵԿԵՂԵՑԱԳԻ-
ՄԱՆ նիւթերու: Վերադարձին՝ յաճախած է Յունական ղպլականը ղասընթացքնե-
րուն: 1981ին, Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի ծեռամբ, ծեռնադրուած է Սարկա-
ւագ՝ Ուոթըրթառունի Ս. Յակոբ ԵԿԵՂԵՑԻ մէջ: 1982ին նշանակուած է Երիտա-

սարդաց վարիչ ԳԵՂՄԱՔԻԾԻ Ա. ԵՐԵՌՈՂՈՒԹԻՒՆ համայնքի: 1983-84 վարած է նոյն համայնքի Կիրակնօրեայ Վարժարանի տեսուչի պաշտօնը: 1988ի ամառը կրօնական արարողութիւններ կատարած է ԳԵՂՎ Գատի ՄԵՂ, ուր սկսած է կազմակերպուիլ նոր համայնք մը:

Տ. Թաղէոս ՔԻՆՅ. Ապտալեան ամուսնացած է նախկին Մարկարէթ Մերանեանի հետ: Ապտալեան ամուլը ունի երկու զաւակներ՝ ՏԵՋՎԻՍ Աւագ, 18 տարեկան, եւ ԱԼԻ-ՍԻՒ Անի, 9 տարեկան:

Նորընծայ Տ. Թաղէոս Քահանայ ձեռնադրութենէ ետք քառասունքի շրջանը կ'անցընէ Ուղղըրվլիթի Ա. Պետրոս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Կարէն Ա. ՔԻՆՅ. Կտանեանի հսկողութեամբ:

ԳԵՐՉ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի կարգադրութեամբ՝ Տ. Թաղէոս Քահանայ պիտի ստանձնէ Կրինֆիլտի Ա. Ցովհաննէս Եկեղեցւոյ հովուութեան պաշտօնը:

ԴԻԱՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ